



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 232/100

«12» դեկտեմբերի 2019

Թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

հ ր ա մ ա յ ու մ ե մ

1. 2019 թ. ԵՊՀ-ի եկամուտների և ծախսերի նախահաշվի «Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին Երևանի պետական համալսարանի հիմնական աշխատողներին վճարել տարեվերջյան դրամական պարգևատրում՝ նրանց հիմնական աշխատանքային պայմանագրով (անհատական իրավական ակտով) 2019 թվականի սեպտեմբեր ամսվա համար հաշվարկված աշխատավարձի չափով՝ բայց ոչ ավելի քան մեկ դրույքը:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով սահմանված պարգևատրումը չի վճարվում 2019 թվականի ընթացքում վեց ամսից պակաս աշխատանքային ստաժ ունեցող աշխատողներին և սույն հրամանի ստորագրման օրվա դրությամբ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատողներին:

3. ԵՊՀ հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահին՝ սույն հրամանով սահմանված դրամական պարգևատրումը վճարել սկսած 2019 թ. դեկտեմբերի 13-ից:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Գ. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ